ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԿԳՄՍՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ներկայացնելով ԿԳՄՍ նախարարության ոլորտների պետական ֆինանսավորման դինամիկան՝ կարևոր է արձանագրել, որ 2018 թվականի համեմատ 2025 թվականին ոլորտային ծախսերն աճել են 154.5 մլրդ դրամից 372.3 մլրդ[1] դրամի: Յոթ տարվա ընթացքում ԿԳՄՍ ոլորտների ֆինանսավորումն ավելացել է շուրջ 217.8 մլրդ դրամով կամ 141 տոկոսով: 2026 թվականի պլանով նախատեսվում է արդեն 422.9 մլրդ դրամ, ինչը 2025 թվականի փաստացի ցուցանիշը գերազանցում է ևս 13.6 տոկոսով:

Այս աճի հիմնական կրողը կրթության ոլորտն է: 2018 թվականին կրթության ֆինանսավորումը կազմել է 128.3 մլրդ դրամ, իսկ 2025 թվականին՝ 311.4 մլրդ դրամ. այն ավելացել է 183.1 մլրդ դրամով կամ շուրջ 143 տոկոսով: 2026 թվականի պլանով կրթության ոլորտի ծախսերը նախատեսված են 353.4 մլրդ դրամ, այսինքն՝ 2025 թվականի համեմատ ևս 42 մլրդ դրամով ավելի: Կարևոր է ընդգծել, որ ԿԳՄՍ ոլորտների ընդհանուր աճի շուրջ 84 տոկոսը ձևավորվել է հենց կրթության ոլորտում:

Կրթության ներսում ամենախոշոր ծավալային աճը հանրակրթության ուղղությամբ է: Եթե 2018 թվականին հանրակրթության ֆինանսավորումը կազմել է 103.1 մլրդ դրամ, ապա 2025 թվականին այն հասել է 269.5 մլրդ դրամի: Սա ավելի քան 166 մլրդ դրամի հավելյալ ֆինանսավորում է, կամ շուրջ 161 տոկոս աճ: 2026 թվականի պլանով հանրակրթության ֆինանսավորումը նախատեսված է արդեն 300.9 մլրդ դրամ: Այս ցուցանիշները փաստում են, որ պետական ֆինանսավորման առանցքում մնում է դպրոցը՝ որպես կրթության որակի, հավասար հնարավորությունների և մարդկային կապիտալի ձևավորման հիմնական միջավայր:

Առանձնապես նշանակալի է նախադպրոցական կրթության դինամիկան. 2018 թվականի 0.8 մլրդ դրամի դիմաց 2025 թվականին նախադպրոցական կրթության ծախսերը կազմել են 9.5 մլրդ դրամ, այսինքն՝ աճել են ավելի քան 12 անգամ: 2026 թվականին նախատեսվում է արդեն 13.8 մլրդ դրամ, ինչը 2025 թվականի համեմատ ևս շուրջ 45 տոկոսով ավելի է: Սա կարևոր է, քանի որ նախադպրոցական կրթությունը կրթական շղթայի մեկնարկային և որոշիչ օղակն է:

Այս տարիների ամենաէական փոփոխություններից մեկը ծախսերի կառուցվածքի փոփոխությունն է: Եթե 2018 թվականին ԿԳՄՍ ոլորտների **կապիտալ ծախսերը** կազմել են ընդամենը 1.3 մլրդ դրամ, ապա 2025 թվականին դրանք հասել են 129.2 մլրդ դրամի: Այս դեպքում առավել արտահայտիչ է նշել, որ կապիտալ ծախսերը աճել են շուրջ 102 անգամ: Դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում 2018 թվականի մոտ 0.8 տոկոսից 2025 թվականին հասել է շուրջ 34.8 տոկոսի, իսկ 2026 թվականի պլանով կկազմի մոտ 40 տոկոս: Սա նշանակում է, որ համակարգը աստիճանաբար անցում է կատարել պահպանման տրամաբանությունից դեպի զարգացման, ենթակառուցվածքների արդիականացման,

[1] *Չի ներառում աշխատակազմի պահպանման ծախսերը:*

շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի հզորացման տրամաբանություն:

Այս փոփոխությունը հատկապես տեսանելի է կրթության ոլորտում: Կրթության կապիտալ ծախսերը 2018 թվականի 1.1 մլրդ դրամից 2025 թվականին հասել են 120.9 մլրդ դրամի: Այստեղ նույնպես խոսքը ոչ թե սովորական աճի, այլ որակական թռիչքի մասին է. կրթության կապիտալ ծախսերը աճել են շուրջ 110 անգամ: 2026 թվականի համար նախատեսվում է 154.8 մլրդ դրամ, ինչը 2025 թվականի համեմատ ևս շուրջ 28 տոկոսով ավելի է:

Գիտության ոլորտում ևս արձանագրվել է էական առաջընթաց: 2018 թվականին գիտության ֆինանսավորումը կազմել է 10.5 մլրդ դրամ, իսկ 2025 թվականին՝ 30 մլրդ դրամ: Սա շուրջ 19.5 մլրդ դրամի հավելյալ ֆինանսավորում է կամ մոտ 186 տոկոս աճ: Գիտության ներսում հատկապես արագ աճել է գիտական հետազոտությունների և նորարարության ուղղությունը՝ ավելի քան 6 անգամ: Սա կարևոր է ոչ միայն գիտական համակարգի պահպանման, այլև գիտելիքահենք տնտեսության, հետազոտական կարողությունների և նորարարության զարգացման տեսանկյունից:

Մշակույթի ոլորտում ֆինանսավորումը 2018 թվականի 12.5 մլրդ դրամից 2025 թվականին հասել է 19.7 մլրդ դրամի: Աճը կազմել է շուրջ 7.3 մլրդ դրամ կամ մոտ 58 տոկոս: 2026 թվականի պլանով նախատեսվում է 23.4 մլրդ դրամ, ինչը 2025 թվականի համեմատ շուրջ 19 տոկոսով ավելի է:

Սպորտի ոլորտում աճը հարաբերական առումով առավել բարձրերից է: 2018 թվականի 2.3 մլրդ դրամի դիմաց 2025 թվականին սպորտի ֆինանսավորումը կազմել է 8.4 մլրդ դրամ, այսինքն՝ աճել է շուրջ 3.7 անգամ: 2026 թվականի պլանով այն նախատեսվում է արդեն 13.4 մլրդ դրամ, ինչը 2025 թվականի համեմատ շուրջ 60 տոկոսով ավելի է: Հատկապես կարևոր է, որ աճել են ոչ միայն բարձր նվաճումների սպորտի, այլև մասսայական սպորտի ծախսերը. վերջինս 2018 թվականի համեմատ աճել է շուրջ 5.7 անգամ:

Երիտասարդության ոլորտում եթե 2018-2021 թվականներին կապիտալ ծախսեր չեն եղել, 2022 թվականից ձևավորվել է նաև կապիտալ բաղադրիչ՝ երիտասարդական կենտրոնների ստեղծման ուղղությամբ: 2022 թվականի շուրջ 51 մլն դրամի դիմաց 2025 թվականին կապիտալ ծախսերը կազմել են մոտ 106 մլն դրամ՝ աճելով շուրջ 108 տոկոսով: 2026 թվականին նախատեսվում է շուրջ 105 մլն դրամ՝ պահպանելով ձևավորված ներդրումային մակարդակը:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ 2018-2025 թվականներին ԿԳՄՍ ոլորտների ֆինանսավորումը ոչ միայն էականորեն ավելացել է, այլև ստացել է հստակ զարգացման ուղղվածություն: Խոշոր ծավալային աճը կենտրոնացել է կրթության ոլորտում, իսկ ամենացայտուն կառուցվածքային փոփոխությունը կապիտալ ծախսերի կտրուկ ավելացումն է: 2025 թվականի բյուջետային պատկերը ցույց է տալիս, որ պետությունը ԿԳՄՍ ոլորտներում ոչ թե պարզապես ավելացել են ընթացիկ ծախսերը, այլ մեծացել ներդրումները՝ ենթակառուցվածքների, որակի, հասանելիության և մարդկային կապիտալի զարգացման ուղղությամբ: